

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/4

27 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Նարեկ Հախվերդյանի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.10.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410846 վարչական ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 13-րդ բաժնի աշխատակիցները 12.10.2012թ-ին կազմել են թիվ 1410846 արձանագրությունը, որում մասնավերապես նշվել է.

26.03.12թ-ին Նարեկ Հախվերդյանը փոստային ծառայության միջոցով ՀՀ տարածք է ներկրել թվով 7 դյուրակիր համակարգիչներ 1.805.455 դրամ մաքսային արժեքով: Նշված համակարգիչներից 3-ը գտնցվում են Նարեկ Հախվերդյանի տանը՝ անձնական օգտագործման նպատակով, իսկ 2-ը գտնվում են սանիկների մոտ, որոնք Նարեկ Հախվերդյանը նվիրել է նրանց: Դյուրակիր համակարգիչ <PAVILKIN DV514> մաքսային արժեքով 256244 դրամ (այդ թվում ԱԱՀ 42707) և դյուրակիր համակարգիչ <SONY VAIO> մաքսային արժեքով 326126 դրամ (այդ թվում ԱԱՀ 54354 դրամ) Նարեկ Հախվերդյանը օտարել է իր ընկերներին, գումարները ստացել է իր ընկերներից և փոխանցել հաշիվներին:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 11.10.12թ-ի թիվ 331-13 որոշումը և Նարեկ Հախվերդյանի բացատրությունը <Հարկերի մասին> ՀՀ 22-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է Նարեկ Հախվերդյանի նշված գործարքներից համախառն եկամուտը, որը կկակզմի 582.370 դրամ (3-րդ անձից՝ Մաքսային մարմնից ստացված տեղեկության համաձայն): Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն <Հարկերի մասին> ՀՀ 22-րդ հոդվածի համաձայն 291.185 դրամ և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 60.000 դրամ սոցիալական վճար, ընդամենը՝ 351.185 դրամ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 13-րդ բաժնի պետը 15.10.2012-ին ընդունել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410846 վարչական ակտը, որով ղեկավարվելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 351.185 դրամ:

Նարեկ Հախվերդյանի գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Այսինքն՝ Նարեկ Հախվերդյանին ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար պատասխանատվության ենթարկելու համար, նախ և առաջ, վարչական մարմինը պետք է ապացուցեր, որ Նարեկ Հախվերդյանը երկու համակարգիչը ձեռք է բերել և վաճառել շահույթ ստանալու նպատակով:

Ոչ Նարեկ Հախվերդյանի բացատրություններում, ոչ վիճարկվող վարչական ակտի <խախտման նկարագրություն> մասում և ոչ էլ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 11.10.2012թ. թիվ 331-13 որոշմամբ, որևէ կերպ չի հիմնավորվել և չի ապացուցվել Նարեկ Հախվերդյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը: Դեռ ավելին, Նարեկ Հախվերդյանն իր բացատրությունում մանրամասն նկարագրել է, որ համակարգչային մասնագետ է, լավատեղյակ է համակարգիչների գներին, տիրապետում է համակարգիչների առևտրով զբաղվող ընկերությունների կայքէջերի միջոցով առևտրի իրականացման կանոններին և առևտրի իրականացման լեզվին, այդ իսկ պատճառով ընկերների խնդրանքով իր համար համակարգիչ պատվիրելիս երկու համակարգիչ էլ ընկերների ընտրությամբ պատվիրել է նրանց համար: Այդ համակարգիչների համար սահմանված գումարը վերցրել է ընկերներից և փոխանցել համակարգիչները վաճառողի հաշվեհամարին: Համակարգիչները Հայաստանի Հանրապետություն ներմուծվելուց հետո, ընկերների հետ գնացել

է մաքսատուն, մաքսագերծել համակարգիչները և տվել տերերին: Նարեկ Հախվերոյանը համակարգիչների առևտրի ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում: Ընկերների համար իր անունով համակարգիչ պատվիրելը և նրանց փոխանցելն ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն չէ, քանի որ առկա չէ շահույթ ստանալու նպատակ: Վարչական մարմինը չի հիմնավորել, որ Նարեկ Հախվերոյանը համակարգիչներն իր ընկերներին վաճառելիս շահույթ ստանալու նպատակ է հետապնդել: Խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի պահանջները՝ վարչական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն չի վերցրել այն անձանցից, որոնց համար Նարեկ Հախվերոյանը պատվիրել և ստացել է համակարգիչներ, որպիսի հանգամանքը նշանակում է, որ չի իրականացվել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում:

Խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի 1-ին մասի «ա» կետի, 4-րդ մասի «ե» կետի և 57-րդ հոդվածի պահանջները՝ սույն գործով գրավոր վարչական ակտում նշում չկա էական փաստական հանգամանքների վերաբերյալ, բացակայում է ակտի ընդունման հիմնավորումը, նշված չեն այն էական փաստական հանգամանքները, որոնցով վարչական մարմինը հիմնավորված և ապացուցված է համարել Նարեկ Հախվերոյանի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածով նախատեսված գործողությունները կատարելու հանգամանքը:

Ըստ վիճարկվող վարչական ակտի, Նարեկ Հախվերոյանի կողմից տված բացատրությամբ և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 11.1 0.2012թ-ի թիվ 331-13 որոշումով հաստատվում է, որ Նարեկ Հախվերոյանն իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Այնինչ, Նարեկ Հախվերոյանի բացատրություններից բերված մեջբերումներով չի հաստատվում այն հանգամանքը, որ երկու համակարգիչներն ընկերների համար պատվիրելու և նրանց հանձնելու համար պահանջել է հավելյալ գումար՝ ստացել է շահույթ: Ինչ վերաբերում է խախտումը հիմնավորող մյուս հիմքին՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 11.10.2012թ-ի թիվ 331-13 որոշմանը, ապա այն վերաբերում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 4-րդ մասի դրույթների կիրառմանը: Նշված որոշմամբ չի հիմնավորվում, որ Նարեկ Հախվերոյանի կողմից կատարվել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներով Նարեկ Հախվերոյանը խնդրում է վարչական ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Նարեկ Հախվերոյանի ներկայացուցչի և 12.10.2012թ. թիվ 1410846 արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Հարկ է նշել, որ ձեռնարկատիրական գործունեության հասկացության մեկնաբանությունը տվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի որոշմամբ: Նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,
4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների

մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ>:

Վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար, ըստ էության, անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն << վճռաբեկ դատարանի որոշմամբ նշված հանգամանքները:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Նարեկ Հախվերդյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը: Սակայն, քննարկվող դեպքում չի պարզվել և բացահայտվել, թե քաղաքացի Նարեկ Հախվերդյանի գործունեության մեջ առկա են արդյոք վերը թվարկված հանգամանքները, թե ոչ: Այսինքն, Նարեկ Հախվերդյանի գործունեությունը որակվել է որպես ապօրինի ձեռնարկատիրություն առանց հիմնավոր ապացույցների առկայության:

<< քաղաքացիական օրենսգրքի և << վճռաբեկ դատարանի նշված որոշման իմաստով ձեռնարկատիրական գործունեության գլխավոր նպատակներից է հանդիսանում շահույթ ստանալու նպատակը: Այսինքն, արդյոք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, թե ոչ: Նշված հանգամանքը քննարկվող դեպքում չի պարզվել:

Հարկ է նշել նաև, որ Ալեքսան Մինասյանը և Արթուր Հովհաննիսյանը, որոնց համար ձեռք են բերվել վերոգրյալ թվով 2 համակարգիչները, 15.11.2012թ-ին տվել են հայտարարություն, որում մասնավորապես նշել են, որ համակարգիչների առուվաճառքի կայք-էջով հիշատակված մոդելի համակարգիչների համար սահմանված գումարներից և մաքսային վճարներից բացի այլ գումար, Նարեկ Հախվերդյանին չեն տվել: Սակայն, վարչական վարույթի ընթացքում նշված հանգամանքը չի քննարկվել և հաշվի չի առնվել:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ առկա չեն բավարար հիմքեր և ապացույցներ քաղաքացի Նարեկ Հախվերդյանի գործունեությունը որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն որակելու համար:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Արևիկյան ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել << ՀԳՎ ՊԵԿ ՕԿՎ 15.10.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410846 վարչական ակտը



Հանձնաժողովի նախագահ՝

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ